

**Ֆինանսական համակարգի հաշտարարը՝ համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, իր մասնագիտական գործունեությունը սկսել է 2009թ. հունվարի 24-ից: Ստորև ամփոփված է Հաշտարարի կողմից ձևավորած 2010թ. օգոստոս ամսվա նախադեպը:**

Հաշտարարի գրասենյակը օգոստոս ամսին ստացել է ֆինանսական կազմակերպություններին վերաբերող ընդհանուր քանակությամբ 39 բողոք: Ֆինանսական կազմակերպություններին չվերաբերող Գրասենյակի ստացած քաղաքացիների զանգերն ու այցելությունները բազմաթիվ են: Ֆինանսական կազմակերպություններին վերաբերող 39 բողոքներից 10-ը, համաձայն օրենքի, ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից (հաճախորդների մի մասը իրավաբանական անձինք են կամ անհատ ձեռներեցներ, մյուսների բողոքները կապված են մինչ Հաշտարարի մասին օրենքն ուժի մեջ մտնելը տեղի ունեցած իրադարձությունների հետ, որոշ պահանջների վերաբերյալ արդեն իսկ առկա է դատարանի որոշում, կամ գործը գտնվում է դատարանի վարույթում, մնացած դեպքերում բողոքները կրում են ընդհանուր բնույթ և ըստ էության չեն պարունակում գույքային պահանջ): Հաշտարարի քննությանը ենթակա 29 բողոքներից 4-ն օգոստոսին ստացվել են գրավոր տեսքով և ընդունվել են քննության:

2010թ.-ի օգոստոսին ներկայացրած ընդհանուր բողոքների քանակը	39
<b>1. Ենթակա են քննության հաշտարարի կողմից</b>	<b>29</b>
1.1. Ենթակա են քննության հաշտարարի կողմից, սակայն հաճախորդը նախապես չի դիմել ֆինանսական կազմակերպությանը	12
1.2. Բավարարվել են կազմակերպության կողմից՝ հաճախորդի ներկայացրած բողոք-պահանջի հիման վրա (որը օգնել են լրացնել Գրասենյակի աշխատակիցները)	7
1.3. Նախնական ուսումնասիրությունից հետո խորհուրդ է տրվել հաճախորդին պահանջը չհանձնել քննության, քանի որ բացակայում էր հաճախորդի՝ որպես սպառողի շահերի ոտնահարման փաստը	6
1.4. Ընդունվել են քննության՝ գրավոր պահանջի ներկայացմամբ, կապված են՝	4
1.4. 1 ապահովագրական դեպքերի հետ	1
1.4. 2 վարկային գործարքների հետ	1
1.4.3 վճարահաշվարկային գործարքների հետ	2

Հաշտարարի գրասենյակ կարելի է դիմել՝ գանգահարելով 58-23-22, 58-23-21 հեռախոսահամարով կամ այցելելով Վազգեն Սարգսյան 26/1, «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 4-րդ հարկ, 411 սենյակ: E-mail: [info@fsm.am](mailto:info@fsm.am) Web: [www.fsm.am](http://www.fsm.am)